ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

N 100 - Ա
14 ապրիլի 2015 թ.

ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՄԵԾ ՊԱՏԵՐԱԶՄՈՒՄ ՏԱՐԱԾ ՀԱՂԹԱՆԱԿԻ 70-ՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԿՐՏՍԵՐ ՏԱՐԻՔԻ ՊԱՏԱՆԻՆԵՐԻ /2001-2002 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ ԾՆՎԱԾ/ ԲՌՆՑՔԱՄԱՐՏԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐԶԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՒԹՅՈՒՆ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ԵՎ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի, <<Մանկապատանեկան սպորտի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 22-րդ հոդվածի և Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի թիվ ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ և 1.19-րդ կետերի պահանջներով

որոշում եմ՝

1. Հաստատել՝

1) Հայրենական Մեծ պատերազմում տարած հաղթանակի 70-րդ տարեդարձին նվիրված Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի կրտսեր տարիքի պատանիների /2001-2002 թվականներին ծնված/ բռնցքամարտի 2015 թվականի մարզային առաջնության կազմակերպման և անցկացման կազմկոմիտեի կազմը՝ համաձայն N1 հավելվածի

2) Հայրենական Մեծ պատերազմում տարած հաղթանակի 70-րդ տարեդարձին նվիրված Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի կրտսեր տարիքի պատանիների /2001-2002 թվականներին ծնված/ բռնցքամարտի 2015 թվականի մարզային առաջնության անցկացման կանոնակարգը՝ համաձայն N2 հավելվածի

3) Հայրենական Մեծ պատերազմում տարած հաղթանակի 70-րդ տարեդարձին նվիրված Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի կրտսեր տարիքի պատանիների /2001-2002 թվականներին ծնված/ բռնցքամարտի 2015 թվականի մարզային առաջնության կազմակերպման և անցկացման մրցավարական հանձնաժողովի կազմը՝ համաձայն N3 հավելվածի

2. Մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետ Ա.Պողոսյանին՝ բռնցքամարտի մարզային առաջնության անցկացման օրերին ապահովել բժշկի ներկայությունը:
3. Սույն որոշման կատարման հսկողությունը վերապահել մարզպետի տեղակալ Ա.Հակոբյանին:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝ Ռ.ԳՐԻԳՈՐՅԱՆ

Հավելված N 1
ՀՀ Գեղարքունիքի մարզպետի
2015 թ. ապրիլի 14 -ի
N 100-Ա որոշման

Կազմ

Հայրենական Մեծ պատերազմում տարած հաղթանակի 70-րդ տարեդարձին նվիրված Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի կրտսեր տարիքի պատանիների /2001-2002 թվականներին ծնված/ բռնցքամարտի 2015 թվականի մարզային առաջնության կազմակերպման և անցկացման կազմկոմիտեի

Բաղալյան Գ. - մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ /նախագահ/
Պողոսյան Ա. - մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետ
Չարվադարյան Գ. - մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության մշակույթի և սպորտի բաժնի վարիչ
Շահբազյան Հ. - մարզպետարանի աշխատակազմի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժնի վարիչ
Առաքելյան Ա. – մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության մշակույթի և սպորտի բաժնի առաջատար մասնագետ
Դանիելյան Մ. – Կարմիրգյուղ համայնքի ղեկավար /համաձայնությամբ /
Կարապետյան Ա.- ՀՀ բռնցքամարտի ֆեդերացիայի Գեղարքունիքի մարզի պատասխանատու /համաձայնությամբ /
Խլղաթյան Խ. - <<Գեղամա աշխարհ>> թերթի գլխավոր խմբագիր /համաձայնությամբ /

Աշխատակազմի ղեկավար Ս. ԽԼՂԱԹՅԱՆ

Հավելված N 2
ՀՀ Գեղարքունիքի մարզպետի
2015թ. ապրիլի 14 -ի
N 100-Ա որոշման

Կանոնակարգ

Հայրենական Մեծ պատերազմում տարած հաղթանակի 70-րդ տարեդարձին նվիրված Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի կրտսեր տարիքի պատանիների /2001-2002 թվականներին ծնված/ բռնցքամարտի 2015 թվականի մարզային առաջնության անցկացման

1.ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Հայրենական Մեծ պատերազմում տարած հաղթանակի 70-րդ տարեդարձին նվիրված Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի կրտսեր տարիքի պատանիների /2001-2002 թվականներին ծնված/ բռնցքամարտի 2015 թվականի մարզային առաջնության /այսուհետ՝ առաջնություն/ նպատակն ու խնդիրներն են.

նպաստել՝

- մարզի համայնքներում բռնցքամարտ մարզաձևի մասսայականացմանը
- պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, մարզական կազմակերպությունների կողմից ֆիզիկական կուլտուրայի և սպորտի ուղղությամբ իրականացվող համագործակցված աշխատանքներին
- ի հայտ բերելու մարզի ուժեղագույն կրտսեր տարիքի պատանի բռնցքամարտիկներին՝ համալրելու մարզի հավաքական թիմը՝ հանրապետական առաջնության եզրափակիչ մրցումներին մասնակցելու համար:

1. ԱՌԱՋՆՈՒԹՅԱՆ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՎԱՅՐԸ ԵՎ ԺԱՄԿԵՏԸ

Առաջնությունը կանցկացվի 2015 թ.-ի ապրիլի 22-23-ը Կարմիրգյուղի մշակույթի պալատում: Թիմերի ընդունելության օրը՝ ապրիլի 22-ին ժամը 9:30-ին, մարզիկների կշռումը կկայանա նույն օրը ժամը 10:00-ից մինչև 11:00-ն: Մրցումների սկիզբը՝ ժամը 12:00-ին:

2. ԱՌԱՋՆՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԸ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

Առաջնությանը թույլատրվում է մասնակցել մարզադպրոցների, մարզական ընկերությունների և համայնքների կողմից հայտավորված 2001 -2002թթ. ծնված պատանի բռնցքամարտիկներին:

Առաջնությունը կանցկացվի հետևյալ՝ 37-38.5կգ., 38.5-40կգ, 40-41.5կգ, 41.5-43կգ, 43-44.5կգ, 44.5-46կգ, 46-48կգ,48-50կգ, ,50- 52կգ, 52-54կգ,54-56կգ, 56-59կգ, 59-62կգ, 62-65կգ, 65-68կգ, 68-72կգ, 72-76կգ և 76+կգ քաշային կարգերում:

Առաջնությունը կանցկացվի բռնցքամարտի միջազգային ֆեդերացիայի և սույն կանոնակարգի համաձայն:

3. ԱՌԱՋՆՈՒԹՅԱՆ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՂԵԿԱՎԱՐՈՒՄԸ

Առաջնության անցկացման ընդհանուր ղեկավարումն իրականացնում է Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչությունը:

Առաջնության անմիջական ղեկավարումը իրականացնում է ՀՀ Գեղարքունիքի մարզի բռնցքամարտի ֆեդերացիան, իսկ մրցումներն անցկացնում և արդյունքներն ամփոփում է մրցավարական հանձնաժողովը:

4. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԾԱԽՍԵՐԸ

Թիմերի գործուղման հետ կապված ծախսերը հոգում են գործուղող կազմակերպությունները /ճանապարհածախս և սնունդ/:

5. ՊԱՐԳԵՎԱՏՐՈՒՄԸ

Առաջնությունում 1-ին և 2-րդ տեղեր գրաված մարզիկները կպարգևատրվեն ՀՀ Գեղարքունիքի մարզի բռնցքամարտի ֆեդերացիայի հավաստագրերով և հուշամեդալներով:

6. ՀԱՅՏԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄԸ

Նախնական հայտերը ներկայացվում են Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչություն՝ մինչև 2015թ ապրիլի 20 -ը:

Մասնակցության վերջնական հայտերը, հաստատված բժշկի և կազմակերպության ղեկավարի կողմից, ինչպես նաև մարզիկների անձը հաստատող փաստաթղթերը ներկայացվում են մրցավարական հանձնաժողով՝ մրցումների օրը:

Աշխատակազմի ղեկավար՝ Ս. ԽԼՂԱԹՅԱՆ

ՀՀ Գեղարքունիքի մարզպետի
2015թ. ապրիլի 14 -ի
N 100-Ա որոշման

Կազմ
Հայրենական Մեծ պատերազմում տարած հաղթանակի 70-րդ տարեդարձին նվիրված Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի կրտսեր տարիքի պատանիների /2001-2002 թվականներին ծնված/ բռնցքամարտի 2015 թվականի մարզային առաջնության կազմակերպման և անցկացման մրցավարական հանձնաժողովի

Կարոյան Մ. - <<Աշխատանքային ռեզերվներ>>մարզական հասարակական կազմակերպության մարզադպրոցի մարզիչ / գլխավոր մրցավար, համաձայնությամբ/

Վարդանյան Հ. – Սևանի քաղաքային մարզադպրոցի մարզիչ / քարտուղար, համաձայնությամբ /

Մնացականյան Վ.- Սևանի քաղաքային մարզադպրոցի մարզիչ / մրցավար, համաձայնությամբ/

Շահինյան Վ. – Մարտունու քաղաքային մարզադպրոցի մարզիչ / հանրապետական կարգի մրցավար, համաձայնությամբ/

Քամայան Ա. - Սևանի քաղաքային մարզադպրոցի մարզիչ / մրցավար, համաձայնությամբ/

Սարգսյան Գ. – Մարտունու քաղաքային մարզադպրոցի մարզիչ /մրցավար, համաձայնությամբ/

Հովհաննիսյան Գ. - <<Սևան>> ԳՄՀԿ մարզադպրոցի մարզիչ /մրցավար, համաձայնությամբ/

Սարգսյան Գագիկ - Մարտունու քաղաքային մարզադպրոցի մարզիչ /մրցավար, համաձայնությամբ/

Մելիքյան Հ. - Լճափ գյուղի բռնցքամարտի մարզիչ /մրցավար, համաձայնությամբ/

Ղարիբյան Հ. - Գավառ քաղաքի մարզադպրոցի մարզիչ /մրցավար, համաձայնությամբ/

Հարությունյան Ա. – Լիճք համայնքի բռնցքամարտի մարզիչ /մրցավար, համաձայնությամբ/

Աշխատակազմի ղեկավար՝ Ս. ԽԼՂԱԹՅԱՆ